

**ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ  
ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**ՈՐՈՇՈՒՄ N 38/7**

ք.Երևան

3 հուլիսի 2018թ.

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), քննության առնելով լրացուցիչ հաշվարկված պարտավորության դեմ «ՍՈՒՐՆԱԼՈՒՍ» ՍՊԸ դիմում-բողոքը՝

**ՊԱՐԶԵՑ**

**1. Բողոքարկման առարկան, դիմում-բողոքով բերված փաստարկները և ներկայացված պահանջները**

«ՍՈՒՐՆԱԼՈՒՍ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ ընկերություն) 2016թ. հանդիսացել է եռամսյակային ԱԱՀ վճարող, սակայն սխալմամբ ներկայացվել է ԱԱՀ-ի ամսական հաշվետվություններ:

2018թ. մայիս ամսին ընկերության կողմից ներկայացվել է 2016թ. ԱԱՀ-ի եռամսյակային հաշվարկներ, սակայն ՀՎՍՎ սպասարկման թիվ 14 բաժնի կողմից «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի համաձայն հաշվարկվել է տուգանք՝ 10.834.156 դրամ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ընկերությունը ժամանակին հաշվարկել և վճարել է ԱԱՀ-ի հաշվարկներով հաշվարկված հարկերը, ուստի բողոքաբերը խնդրում է նշված տուգանքը չեղարկել:

**2. Դիմում-բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը**

«ՍՈՒՐՆԱԼՈՒՍ» ՍՊԸ-ն 2016թ. ընթացքում հանդիսացել է եռամսյակային ԱԱՀ վճարող, սակայն թյուրիմացաբար ընկերության կողմից ներկայացվել են ԱԱՀ-ի ամսական հաշվարկներ:

15.05.2018թ. ընկերության կողմից ներկայացվել են 2016թ. 1-4-րդ եռամսյակների ԱԱՀ-ի հաշվարկները:

Հարկային մարմնի կողմից, ղեկավարվելով մինչև 01.01.2018թ. գործող «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի դրույթներով, հաշվարկվել է տուգանք՝ գումարով 10.834.156 դրամ, ինչի մասին ընկերությանը 29.05.2018թ. գրությամբ ծանուցվել է:

**3. Հիմնավորումներ, պատճառաբանություններ և եզրահանգումներ**

Մինչև 01.01.2018թ. գործող «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի համաձայն՝ ԱԱՀ-ի վճարման հաշվետու ժամանակաշրջան է համարվում յուրաքանչյուր եռամսյակը՝ բացառությամբ այն անձանց համար, որոնց՝ նույն օրենքի 6 հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով սահմանված գործարքներից հասույթը (առանց ԱԱՀ-ի) նախորդող օրացուցային տարում գերազանցել է 100 միլիոն դրամը: Վերջիններիս համար ԱԱՀ-ի վճարման հաշվետու ժամանակաշրջան է համարվում յուրաքանչյուր ամիսը:

Մինչև 01.01.2018թ. գործող «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 16.1-րդ հոդվածի համաձայն՝ որևէ հաշվետու ժամանակաշրջան (ամիս, եռամսյակ, կիսամյակ, տարի) սկսվում է տվյալ հաշվետու ժամանակաշրջանի առաջին ամսվա 1-ից (նոր ստեղծված հարկ վճարողի համար՝ պետական գրանցման պահից) և ավարտվում է տվյալ հաշվետու ժամանակաշրջանի վերջին ամսվա վերջին օրով: Հարկային մարմին հաշվարկները (հայտարարագրերը, հաշվետվությունները, հաշվեկշիռները) ներկայացվում են հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո (բացառությամբ ներմուծման և արտահանման հարկային հայտարարագրերի, հարկ վճարողի լուծարման, ոչ ռեզիդենտի գործունեության դադարեցման կամ ֆիզիկական անձի՝ Հայաստանի Հանրապետությունից մեկնելու դեպքերի, ինչպես նաև ֆիզիկական անձանց կողմից օրենքով սահմանված կարգով ներկայացվող գույքահարկի հաշվարկների):

Հարկ է նշել նաև, որ քննարկվող հարցի վերաբերյալ Հանձնաժողովն իր դիրքորոշումը բազմիցս արտահայտել է նմանատիպ գործերով կայացված այլ որոշումներով: Այսպես, Հանձնաժողովն արձանագրում է, որ ընկերության կողմից ԱԱՀ-ի եռամսյակային հաշվարկներ ներկայացնելու փոխարեն ԱԱՀ-ի ամսական հաշվարկներ ներկայացվելու պայմաններում պետական բյուջե վճարվող ԱԱՀ-ի գումարների չափը չի փոփոխվել, այսինքն՝ դրա հետևանքով պետական բյուջե պակաս ԱԱՀ-ի գումար չի վճարվել: Ընդհակառակը, ԱԱՀ-ի ամսական հաշվարկներ ներկայացվելու արդյունքում ընկերության կողմից ԱԱՀ-ի գծով պարտավորությունները կատարվել են սահմանված ժամկետից շուտ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն. «Վարչարարություն իրականացնելիս վարչական մարմիններին արգելվում է միայն ձևական պահանջների պահպանման նպատակով անձանց ծանրաբեռնել պարտականություններով կամ մերժել նրանց որևէ իրավունք տրամադրելը, եթե նրանց վրա դրված պարտականությունները բովանդակային առումով կատարված են»:

Հանձնաժողովի համոզմամբ, տվյալ դեպքում գործ ունենք մի իրավիճակի հետ, երբ ավելացված արժեքի հարկի հաշվարկներն ընկերության կողմից ամսական կտրվածքով ներկայացվել են թյուրիմացության հետևանքով, այսինքն՝ թույլ տրված խախտումը, ըստ էության, կրում է ձևական բնույթ, քանի որ ընկերության վրա դրված պարտականությունները բովանդակային առումով, կատարված են:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով քննարկվող հարցի վերաբերյալ Հանձնաժողովի ընդունած նախադեպային որոշումները, ընկերության դիմում-բողոքը ենթակա է բավարարման:

#### 4. Եզրափակիչ մաս

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 20-րդ բաժնով, «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով, Հանձնաժողովը

#### ՈՐՈՇՈՒՄ Է՝

Լրացուցիչ հաշվարկված պարտավորության դեմ «ՍՈՒՐՆԱԼՈՒՍ» ՍՊԸ դիմում-բողոքը բավարարել:

Հանձնաժողովի նախագահ՝



Ռ.ՄԱՇԱԴՅԱՆ